ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2026

Տավուշ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) անագորույն-ժանտ, ճոպան-թոկ, շրջահայաց-թանձրամիտ
2) ոստնել-ցատկել, վիրապ-վեմ, զավեշտ-հեգնանք
3) կիպ-սերտ, վաղօրոք-կանխապես, ընկրկել-զարհուրել
4) կապուտակ-մով, աննման-չնաշխարհիկ, հակիրճ-սեղմ

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են նախածանցավոր:**

1) առերես, առևտուր, առհավետ
2) տարանջատ, տարբեր, տարակույս
3) նախնի, նախագահ, նախահաշիվ
4) վերադարձ, վերաբացում, վերընթաց

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում փակագծերում նշված տառը:**

1) հանդիպակա-, ընչա-ք, ցն-ուղ, լվա-ք **(ց)**
2) պ-րանք, զեղ-ել, կտրի-աբար, ա-ագեղ **(չ)**
3) ա-բարիշտ, ա-փոփոխ, բա-բասանք, հա-բույր **(մ)**
4) արյուն-ուշտ, ճանկ-ել, պայտա-, բուրվա- **(ռ)**

4 **Ո՞ր շարքի բառերից *ոչ մեկի* բաց թողած տեղում *չի* գրվում *յ*:**

1) հարու-ցիչ, գու-շակ, լռել-այն
2) հաստաբու-ն, վա-րկյան, Նապոլ-ոն
3) թ-որեմ, եղ-ամ, բու-ռավետ
4) աշխու-ժություն, ակադեմ-ա, աղյուս-ակ

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում գծիկով:**

1) կենաց(մահու), ցուցահանդես(վաճառք), իրեն(իրեն)
2) խեթ(խեթ), գլուխ(կոտրուկ), զուգվել(զարդարվել)
3) անդր(բևեռային), աղաչանք(պաղատանք), կաս(կարմիր)
4) գիշեր(ցերեկ), մեն(մենակ), հետ(ճգնաժամային)

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է ձայնավորը հնչյունափոխվել բաղաձայնի:**

1) հոգյակ, պատվասեր, չվացուցակ
2) կայազոր, լեզվանի, թթվահամ
3) աղվամազ, որդյակ, ուրվական
4) առվեզր, թվաքանակ, ձվածեղ

7 **Ո՞ր շարքի բոլոր բառերի միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով:**

1) ՊԱՐՍԻՑ ԾՈՑ, ՏՐԴԱՏ ԵՐԲՈՐԴ, ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔ
2) ԲԵՐՄՈՒԴՅԱՆ ԵՌԱՆԿՅՈՒՆԻ, ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ
3) ՀՈԲ ԵՐԱՆԵԼԻ, ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ, ԱՐՏԵՄԻՍԻ ՏԱՃԱՐ
4) ՀՌՈԴՈՍԻ ԿՈԹՈՂ, ՀԱՂԹԱՆԱԿԻ ԿԱՄՈՒՐՋ, ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ

8 **Ո՞ր նախադասության մեջ մեկից ավելի կապ կա:**

1) Երբ նա առաջ էր կռանում կամ բոբիկ ոտքերով քայլում խսիրի վրա, զրնգում էին նրա թևերի արծաթագույն սուրմաները:
2) Ավին հիմա էլ ողջ է, չնայած սովորական գլխի փոխարեն մարդկային գանգ է՝ բոլորովին կլպված, առանց մազի ու մորթու:
3) Նրա հայացքը սևեռված մնաց մխացող օջախին, մոխրի մոտ չոքած կնոջը. որտե՞ղ էր տեսել նա նման մի դեմք:
4) Մինչև նրանք կհասնեին վրաններին, շները վազեցին դեպի ձիավորները:

9 **Ո՞ր նախադասության մեջ պատճառական բայ *չկա:***

1) Քուռակի մայրը գիտեր, որ կայծակը ճայթելու է, ճայթյունը վախեցնելու է քուռակին:
2) Հասմիկի զվարթ, կարկաչուն ծիծաղը, առինքնող խոսքը կենդանացրին ներկայացումը՝ առանձնակի շուք հաղորդելով նրան:
3) Չուխաջյանի երաժշտական լեզուն իր մեջ խտացրել է թե՛ հայկական, թե՛ արևելյան երաժշտության տարրերը:
4) Ժողովրդի կողմից խնամքով պահպանված մինչև անգամ փոքրաքանակ հուշարձանների մնացորդների վրա հնարավոր է ցույց տալ զարգացման փուլերը:

10 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն *չկա:***

1) **սողոսկել**-ներս թափանցել, **թեզանիք**-հնամաշ զգեստ
2) **ակնարկ**-ոչ ուղղակի ասված խոսք, **սրվակ**-ապակյա փոքրիկ անոթ
3) **կղմինդր**-թրծած աղյուս, **միամորիկ**-միայն մայր ունեցող
4) **անպաճույճ**-առանց զարդարվելու, **տարփողել**-թաքուն պահել

11 **Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն տրված վերջածանցը:**

1) ***ոն*** – գողոն, գործոն, թափոն, կանոն
2) ***իք*** – կարծիք, աղիք, չարիք, տանիք
3) ***ուկ*** – փափուկ, նորելուկ, հանելուկ, բանուկ
4) ***ուտ*** – շամբուտ, թավուտ, թփուտ, ջլուտ

12 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

1) թռչնաբույծ, գիսաստղ, կողաթև, միջնապատ
2) բնագիր, անվադող, պահանջատեր, ուղեցույց
3) ցուցափայտ, երկրամաս, գետաձի, սեպագիր
4) կցակար, գորգեզր, ջրատար, սալաքար

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են պատկանում տրված խոսքի մասին:**

1) թեպետ, ո՛չ....ո՛չ, թե չէ, ոչ միայն...այլև *(շաղկապ)*
2) միմիայն, միևնույն, բարեբախտաբար, իրավամբ *(վերաբերական)*
3) ամբողջ, ամենուր, մի քանի, սույն *(դերանուն)*
4) յուրովի, ծալովի, դեսուդեն, քանիցս *(մակբայ)*

14 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

1) տոհմանուն, գալուստ, փոստատուն
2) սուրանկյուն, աշուն, ծանրություն
3) հենապյուն, շրշյուն, մաքրություն
4) մրրկաձյուն, արյուն, որսաշուն

15 **Ո՞ր տարբերակում են դարձվածքները ճիշտ համապատասխանեցված իրենց իմաստներին:**

1. թևերը փռել	ա. նվաստանալով խնդրել
2. գլուխը լցնել	բ. ուշադրության կենտրոնում պահել
3. ջրի երես հանել	գ. հովանավորել
4. երես ծռել	դ. բացահայտել
	ե. մեկին որևէ արարքի դրդել

1) 1-ա, 2-ե, 3-բ, 4-գ
2) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա
3) 1-ա, 2-դ, 3-բ, 4-ե
4) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ե

16 **Ո՞ր նախադասության մեջ չափի պարագա *չկա:***

1) Շինականն արտից առավ մի բուռ հող, Լցրեց քսակը և արագընթաց Հասավ իշխանի ապարանքը ճոխ:
2) Թափառական Շիդհարը տեսավ զարմանքով, որ այն վաղեմի ծանոթ ծովը, որի շառաչուն ափերով ինքը բազմիցս անցել էր իր դարավոր թափառումների ընթացքում, հիմա մի ծարավուտ և տատասկոտ անապատ է դարձել:
3) Երկար ճանապարհից հոգնած ուղևորը, ձեռքը ճակատին դրած, գլուխը հենել էր գնացքի պատուհանին ու աշխատում էր փոքր-ինչ քնել:
4) Սարսափելի էր այս ամենն այնքան, Որ մեր շուրթերից ոչ մի բառ չընկավ:

17 **Ո՞ր նախադասությունը տրված գծապատկերին *չի* համապատասխանում:**



1) Թեև փետրվարի վերջն էր, այնուամենայնիվ ցրտերն օրեցօր սաստկանում էին, քաղաքում զգացվում էր մթերքի, առաջին հերթին հացի կարիք, քանի որ կապը խզված էր շրջանների հետ, և գյուղացին այլևս ոչինչ չէր բերում քաղաք՝ ո՛չ մթերք, ո՛չ վառելիք:
2) Երբ անտառ էր գնում, անպայման ինձ հետն էր տանում. այնտեղ ծանր փայտեր էի դնում ուսիս, որ ավելի ուժեղանամ և այդպես կոփվելով՝ դառնամ իսկական տղամարդ:
3) Այնքան փոշի կա այստեղ, որ իրենք հեշտությամբ կարող են վարակվել, ուստի պնդում էր, որ շուտափույթ հեռանան այդ վայրից և ապրեն ավելի ապահով ու մաքուր մի վայրում:
4) Հենց դասաժամը վերջացավ, աշակերտները պատրաստվեցին հեռանալու, և այդ պահին ընկերս խնդրեց ուսուցչին, որ աշակերտները մի հետաքրքիր պատմություն պատմեն կամ բոլորը միասին մի երգ երգեն:

18 **Տրված հատվածը ո՞ր հայերենով է շարադրված:**

Սրտիս դառնահեծ հառաչանքների
Վայն ու ողբաձայն աղաղակները
Վերընծայում եմ քեզ, ո՜վ գաղտնատես.
Եվ իմ սասանված մտքի ճենճերող
Իղձերի պտուղ նվերն այս դրած
Անձս տոչորող թախծի կրակին՝
Կամքիս բուրվառով առաքում եմ քեզ:

1) գրաբարով
2) արևմտահայերենով
3) արևելահայերենով
4) միջին հայերենով

19 **Ո՞ր բարդ նախադասության ստորադաս բաղադրիչի պաշտոնն է սխալ նշված:**

1) Տեսնելով կրկեսում վալս պարող այդ ձիուն՝ ես զգացի, որ ինձ համար թանկ է բեռնաձին: - *ձևի պարագա*
2) Թեկուզ դարն է ծնում, և երկիրն է տալիս երգին շունչ ու ոգի, Բայց երգը երկրից ու դարից մի՛շտ երկար է տևում: - *զիջման պարագա*
3) Ես ինձնից գոհ եմ, որովհետև ահա երեկվա գյուղացի՝ հիմա լրիվ ազատված եմ հովիվ դառնալու և հոդացավից նվալու վտանգից: -*պատճառի պարագա*
4) Լեռների փեշերի մոտ հևում էր ծովը, ուր լուսափետուր որորները քնքշորեն խփում էին իրենց կրծքերը կոհակներին:- *որոշիչ*

20 **Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված հատկացուցիչ *չկա:***

1) Մեր՝ երեխաներիս աչքը չէր հեռանում նրանցից. ուշիուշով դիտում էինք արագիլներին:
2) Մենք նստեցինք այգու նստարաններին՝ իրար դեմ դիմաց, և երկար նայում էինք միմյանց:
3) Ես շատ էի լսել սոխակի երգերը, լսել ու հիացել, բայց բոլորի սրտերը գերող այսպիսի երգ առաջին անգամ էի լսում:
4) Լառ-Մարգարը ոչ ոքի չասաց, թե ինչու արցունքներ երևացին իր աչքերում, երբ առաջին անգամ գնացքի պատուհանից հայրենի եզերքը տեսավ:

21 **Բարդ ստորադասական նախադասություններից որի՞ փոխակերպումն է սխալ:**

1) *Չնայած չորանոցի դռան ծածկված լինելուն՝ լսվում էր Մամոյի՝ ականջ ծակող ձայնը:*
   Թեև չորանոցի դուռը ծածկված էր, լսվում էր Մամոյի ականջ ծակող ձայնը:
2) *Ես, որ աշխարհն եմ սրտիս մեջ կրում, սրտերի համար սրտով եմ գրում:*
   Ես՝ աշխարհը սրտիս մեջ կրողս, սրտերի համար սրտով եմ գրում:
3) *Մրրիկը հանդարտվեց այն ժամանակ, երբ նավաստիները փոխել էին բոլոր առագաստները:*
   Մրրիկը հանդարտվեց նավաստիների՝ բոլոր առագաստները փոխելուց հետո:
4) *Կառամատույցից ես դիտում էի, թե ինչպես է խարիսխը կամաց-կամաց դուրս գալիս ծովից:*
   Կառամատույցից ես դիտում էի կամաց-կամաց ծովից դուրս եկող խարիսխը:

22 **Գ. Զոհրապի ո՞ր նորավեպից է տրված հատվածը.**

«Գիտեր, ստույգ գիտեր ալ, որ ամուսինը չպիտի գար. բայց իրիկունը, առանց ուզելու, քայլերը կ՚առաջնորդեին զինքը այն արտը, ուրկե վերջին անգամ տեսած ու Պոլիս ճամբած էր իր երիտասարդ էրիկը»:

1) «Ճիտին պարտքը»
2) «Փոստա՛լ»
3) «Այրին»
4) «Այինկա»

23 **Նշված անձանցից որի՞ անունը հայ գրերի գյուտի հետ *չի* կապվում:**

1) Եզնիկ Կողբացու
2) Վռամշապուհի
3) Դանիել եպիսկոպոսի
4) Հռոփանոսի

24 **Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Հյուրերին ……. նկատեցի մի բան. Լևոնը անհույս ……. էր օրիորդին, սակայն չէր տեսնում ……. բաժանող ……..:

(հրաժեշտ տալ, սիրահարվել, ինքը, անջրպետ)

1) հրաժեշտ տալով, սիրահարվել, իրենցից, անջրպետից
2) հրաժեշտ տալով, սիրահարված, իրենցից, անջրպետը
3) հրաժեշտ տալիս, սիրահարվել, իրենց, անջրպետից
4) հրաժեշտ տալիս, սիրահարված, իրենց, անջրպետը

25 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Այդ հսկա բորենու ծնոտը, ըստ նրա կմախքի ուսումնասիրության, որքան էլ զարմանալի է, ընդունակ էր 1սմ քառակուսու վրա 20 տոննա ծանրությամբ կծել: Ակնհայտ էր, որ «սարսափելի ժամանակների» ամենատիրական գիշատիչներից մեկը հենց բորենիները պետք է լինեին:
2. Հիշյալ կենդանիների կմախքները հայտնաբերել են Միջերկրականի ափերից 200 մղոն հարավ գտնվող վայրերում նավթ որոնողները, և կենսաբանների հավաստմամբ դրանք գուցե աշխարհում ամենախոշոր կմախքներն են:
3. Մոտավորապես 30-54 միլիոն տարի առաջ ներկայիս Լիբիայի տարածքում ապրում էին մաստոդոնտներ, ծովային կովեր, 50 ոտնաչափ երկարությամբ կոկորդիլոսներ: Ընդ որում, ըստ որոշ դիտարկումների՝ դրանք բոլորը պետք է որ սարսափահար փախչելիս լինեին ռնգեղջյուրի մեծություն ունեցող բորենիներից:
4. Գիտնական Սևիջը կարողացավ հայտնաբերել հսկա բորենու կմախք, ինչպես նաև հնագույն հսկա փղի՝ 120 սմ երկարությամբ մարգարտավարդագույն ժանիքներ: Որոշ ժամանակ անց Սևիջին պարզ դարձավ իր ուսումնասիրած կենդանիների, հատկապես գիշատչի վտանգավորության չափը:

1) 4, 1, 2, 3
2) 3, 2, 4, 1
3) 4, 1, 3, 2
4) 3, 2, 1, 4

26 **Նշվածներից ո՞վ Հ. Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի հերոսներից *չէ:***

1) Ռոստոմը
2) Արուսը
3) Աղունը
4) Սիմոնը

27 **Ա. Բակունցի ո՞ր պատմվածքից է հետևյալ հատվածը.**

«Ավին երրորդ անգամ կրակեց, բերդանի գնդակը խրվեց ձյունի մեջ, վզգաց, ինչպես շիկացած խոփը դարբնոցի ջրաքարում: Երրորդ կրակոցը նրա բերդանի վերջին ճիչն էր: Ավին մինչև վերջ էլ չիմացավ, թե ինչու չորրորդ փամփուշտը բերդանը ներս չառավ:

Արջը ոռնոցով մի ոստյուն էլ արեց: Ավին շատ մոտ զգաց վիրավոր գազանի տաք շունչը…»:

1) «Խոնարհ աղջիկը»
2) «Մթնաձոր»
3) «Միրհավ»
4) «Սպիտակ ձին»

28 **Ո՞վ է հայոց այրուձիի հրամանատարը Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»-ում:**

1) Սրվանձտյա Գարեգինը
2) Ատոմ Գնունին
3) Ընծայնոց Արսենը
4) Գաղիշո Խորխորունին

29 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ *չկա:***

1) Միակ ուղևորը, որ լուռ նստել էր լաստանավի աջ եզրին ու մի ձեռքով խաղում էր կապույտ կոհակների հետ, նկարիչ՝ Փանոս Թերլեմեզյանն էր:
2) Տասներեքերորդ դարում՝ օրըստօրե փթթող Անի քաղաքում, ապրում էր մի իշխան՝ Անանիա անունով:
3) Փոքրիկներից ութ-ինը քայլ հեռու՝ գյուղական տան շեմին, նստած էր մի երիտասարդ կին՝ գույնզգույն զգեստով. նա այդ երեխաների մայրն էր:
4) Հազիվ աչքը փակել էր, երբ քաղցից արյան ծարավի լվերը վխտալով՝ հարձակվեցին փափկակենցաղ հյուրի վրա:

30 **Ո՞ր բառն է բաց թողած:**

Ո՞վ քաղցրությունը նայվածքին իր ծաղիկ.
Ո՞վ պերճությունը ..... իր հրպարտ.
Ճամբուն վրա՝ իր քայլերուն հետքը վարդ,
Ուր հեշտորեն կը հածի դեռ իմ մենիկ….

1) նազանքին
2) հայացքին
3) աչքերուն
4) գրնացքին

31 **Տրված քառատողը Վ. Տերյանի ո՞ր բանաստեղծությունից է:**

Վտարանդի, երկրում աղոտ,
Լուսե՛ղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է, որպես աղոթք,
Արքայական քո լեզուն:

1) «Մի՞թե վերջին պոետն եմ ես»
2) «Իջնում է գիշերն անգութ ու մթին»
3) «Կարծես թե դարձել եմ ես տուն»
4) «Որպես Լաերտի որդին»

32 **Ո՞րն է բաց թողած բառակապակցությունը:**

Հիմա այդ մեծ գերդաստանից
Ոչ մեկը չկա…
Ես եմ մնում.....
Եվ իբրև վկա:

1) իբրև ներկա
2) լոկ իբրև հուշ
3) իբրև ժառանգ
4) իբրև մեծ թոռ

33 **Ո՞ր նախադասություններում բուք պիտի դրվի:**

1. Մարությանի առջև բացվեց մի զարհուրելի տեսարան այս ու այն կողմ ընկած էին վեց մշակների դիակներ:
2. Ծխի սև քուլաները հրեղեն սյան հետ գալարվելով ձգվում էին մինչև երկնքի աստղերը:
3. Իր բախտին ու բեռանը հնազանդ դանդաղ բարձրանում էր ձին նեղ արահետով:
4. Լուսնկա մի երեկո երբ տասնիններորդ դարը դեռ չէր հասել իր մեկ երրորդի վերջին մի դեռատի տղամարդ ու կին վերջինիս ձեռքից բռնել էր իննամյա մի աղջնակ մոտենում էին Զմյուռնիայի գյուղերից մեկին:
5. Նա զգում էր որ լավ կլիներ ինչ-որ բան ճշտեր այլապես ամեն ինչ գլխում խառնաշփոթի էր վերածվել:

34 **Ո՞ր տարբերակներում է ընդգծվածը գերադաս նախադասություն:**

1. <u>Այսօր բաց էին պատուհանների ապակե փեղկերը</u>, և փողոցի տոթն առատորեն լցվում էր ներս:
2. Ինձ խմբի ավագ նշանակեցին, <u>ու ես տեսա</u>, որ թեկուզ փոքրիկ, թեկուզ յոթհոգանոց խմբի գլուխ կանգնելն ինձ դուր է գալիս:
3. <u>Հենց էշը զոռում էր</u>, ով տանը ժամացույց ուներ, անմիջապես նայում էր և սլաքներն ուղղում յոթից քառորդ անց:
4. Երբ մենք բաց էինք թողնում մեր թռուցիկները, <u>թվում էր</u>, թե քաղաքի վրա լողում են տասնյակ լուսիններ:
5. <u>Փայտահատը հետ քաշվեց</u> ու սոսկումով նայում էր, թե ինչպես են վերքից ընկնում մերթ կարմիր արյան նման, մերթ վճիտ արցունքի պես կաթիլները:

35 **Նախադասության անդամների ձևաբանական վերլուծության տարբերակներից որոնցո՞ւմ սխալ *չկա:***

Բյուր ծաղիկների արբշիռ բույրերը տարածվել էին անդնդախոր կիրճերում, ուր բարձրաբերձ լեռնաշղթաներից գոռում-գոչյունով գահավիժում էին ականակիտ աղբյուրների պաղպաջուն ջրերը՝ համբուրելով խորդուբորդ քարափները:

1. **բյուր** – թվական
2. **ուր** – հարաբերական դերանուն
3. **տարածվել էին** – կրավորական սեռ
4. **անդնդախոր** – ածական
5. **գահավիժում էին** – բաղադրյալ ժամանակաձև
6. **գոռում-գոչյունով** – ձևի մակբայ

36 **Ո՞ր բառերի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:**

1. ճամփաբաժան – ***ճամփա, բաժ***՝ արմատներ, ***ան***՝ վերջածանց
2. հրագանգուր – ***հուր, գանգուր***՝ արմատներ, ***ա***՝ հոդակապ
3. մոխրագույն – ***մոխիր***՝արմատ, ***ա***՝ հոդակապ, ***գույն***՝ վերջածանց
4. միջնապատ – ***միջին, պատ***՝ արմատներ, ***ա***՝հոդակապ
5. համատրամաչափ –***համ(ա)***՝նախածանց, ***տրամ, չափ***՝արմատներ, ***ա***՝ հոդակապ
6. հետնամուտք – ***հետ, մուտ***՝ արմատներ, ***ին, ք***՝ վերջածանցներ, ***ա***՝ հոդակապ

37 **Որո՞նք են անկախ դերբայ:**

1. հանգցնելիս, 2. անհանգստացել, 3. հանգրվանած, 4. հիշող, 5. տեսել, 6. երգի, 7. զարմացրել, 8. հասնել

38 **Համարակալված բառերից որոնցո՞ւմ ուղղագրական սխալ կա:**

Պրոֆեսորը հասավ մի հին եկեղեցու, որ արդեն փակված էր հաճախորդ չլինելու պատճառով: Կանգ առավ խռովված(1) հոգով: Կատարեալ(2) լռություն էր տիրում: Քարերը տամկացել(3) էին, մտնոլորտը(4) հագեցած էր պատերի մքլածությամբ(5): Եթե բաց լիներ եկեղեցին, նա ամպայման(6) ներս կմտներ, կխոկար(7) լքված տաճարում, որտեղ մի ժամանակ երգել էին գիրկ(8) թևիկներով հրեշտակները:

39 **Ընդգծվածներից քանի՞սն են դերանուն:**

Ասում են, որ <u>մի</u> վտիտ մարդ՝ <u>այլ</u> տարազով, երեկոները, <u>երբ</u> քաղաքի աղմուկը <u>ամբողջովին</u> հանդարտվում է, փողոցի վերջում սպասում է տրամվային: Տրամվայը <u>նրան</u> տանում է քաղաքից դուրս, և մարդն ուրախությունից դողում է. համոզված է, <u>որ</u> բարձրանալու է <u>ինքը</u> բիբլիական լեռան գագաթը և տեսնելու է <u>իր</u> ցնորքի աշխարհը:

40 **Բառերից քանիսո՞ւմ է ընդգծված *ե*-ն արտասանվում *յէ:***

զարկ<u>ե</u>րակ, կիսա<u>ե</u>փ, վեր<u>ե</u>լք, գետ<u>ե</u>զր, ինքնա<u>ե</u>ռ, ան<u>ե</u>րեր, մեն<u>ե</u>րգ, ակն<u>ե</u>րև

41 **Բառազույգերից քանի՞սն են կազմված հականիշներից:**

բանուկ-սակավագնաց, անբասիր-արատավոր, հանդիմանություն-գովեստ, բացահայտ-գողտրիկ, հեգ-աշխատասեր, լերկ-բուսառատ, խելամիտ-անաչառ, անընտգյուտ-կատարյալ

42 **Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**

Անցած օրերի հուշերն եմ թերթում
Եվ խաղաղ սրտով անխռով-մենակ
Քնքուշ երգերից հյուսում եմ մանյակ,
Որ պճնեմ սիրով պատկերդ տրտում:

հանգավորում, մակդիր, համեմատություն, շրջադասություն, չափազանցություն, փոխաբերություն, հակադրություն

43 **Նախադասության անդամներից քանիսի՞ պաշտոնն է ճիշտ տրված:**

Մայրուղուց դեպի աջ թեքվելով՝ կարող ես վեց-յոթ կիլոմետր գնալ, և քո առաջ անակնկալ կբացվի բնության այդ հրաշալիքը՝ Պարզ լիճը, ու կցնցի իր գեղեցկությամբ:

- **քո առաջ** – հանգման խնդիր
- **մայրուղուց** – անջատման խնդիր
- **դեպի աջ** – տեղի պարագա
- **Պարզ լիճը** – ենթակա
- **անակնկալ** – ձևի պարագա
- **բնության** – հատկացուցիչ
- **գեղեցկությամբ** – միջոցի խնդիր

44 **Ընդգծվածներից քանի՞սն են ուղիղ խնդիր:**

Միայն մի <u>կետ</u> կա, որտեղից նայելիս <u>քարաժայռը</u> թվում է տղամարդու վիթխարի <u>գլուխ</u>: Երբ նայում ես այդ կետից, կարծես տեսնում ես սպարապետի <u>կիսադեմը</u>՝ կոր քթով, մորուքով, իսկ գլխին դրված է նշանավոր <u>սաղավարտը</u>: Լեռների միջև՝ անդնդախոր ձորում, նկատվում է վիթխարի անձեռակերտ արձանի <u>գլուխը</u>, ու մտածում ես, թե <u>արձանը</u> գուցե դրած են եղել լեռան գլխին, բայց մի օր տապալվել ու ընկել է ձորը, և լավ որոնելու դեպքում հնարավոր է գտնել նաև <u>մարմինը</u>:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Որոշիչը կարող է արտահայտվել բոլոր անկախ դերբայներով:
2. Որոշիչը կարող է ցույց տալ գոյականով արտահայտված որոշյալի չափը, քանակը:
3. Ցանկացած խոսքի մասով արտահայտված ենթական կարող է ստանալ որոշիչ լրացում:
4. Որոշիչը կարող է արտահայտվել կապական կառույցով:
5. Ստորոգելին չի կարող ունենալ որոշիչ լրացում:
6. Բազմակի որոշիչները իրարից անջատվում են բութով:

Բ մակարդակ

46 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Պատառոտված թարփը դժվարացնում էր ձկնորսի աշխատանքը:
2) Բամբիշը ներկայացավ թագավորական տան անդամներին իր նոր սանրվածքով:
3) Այդ շաղափն այլևս չէր գործածվում պատ ծակելու համար:
4) Դրաստը ցեղական էր և իշխանի ամենասիրելին:

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավանկ:**

1) կրափոշի, թիավարել, տղամարդ, հայրենադարձ
2) անասնապահ, մորաքույր, մտահայեցություն, ուսումնատենչ
3) ավարառու, գնդասեղ, կուսակցական, կենսատու
4) կետորսանավ, ալեծուփ, մշտադալար, հյուրասեր

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:**

1) բնութագիր, ածխահանք, դիտարժան, տնտեսություն
2) յուրօրինակ, տարկետում, վիպասան, տանտիրուհի
3) բնօրրան, արևայրուք, պարփակել, խոսքարվեստ
4) տափօղակ, տրտմաշուք, խոտհարք, երեսունչորս

49 **Ո՞ր շարքի բառերից ոչ մեկում ուղղագրական սխալ *չկա:***

1) մրրկահողմ, տաղտուկ, բուդդիզմ, գլուխկոնծի
2) մտացածին, հինավուրձ, լուսատտիկ, ապաշխարել
3) նախկին, ժպիրհ, հղբանալ, խափշիկ
4) սայթաքել, տարրական, կառկառուն, որձկալ

50 **Ո՞ր շարքի բոլոր բառերում մեկից ավելի հնչյունափոխություն կա:**

1) գնացուցակ, հովվերգություն, ջրասուզակ
2) մտադրություն, վերջնահաշվարկ, ուղղաթիռ
3) մաքրագրել, կիսափտած, ուսուցչանոց
4) ձվատվություն, քննչական, թախծաշաղախ

51 **Ո՞ր տարբերակում են երկու ընդգծված անդամների պաշտոնները ճիշտ նշված:**

1) Այս միտքն այնքան <u>1. հաճելի</u> թվաց Արշակին, որ նա նստեց՝ <u>2. մտածմունքներից</u> ու երթևեկությունից հոգնած: *(1–ձևի պարագա, 2–անջատման խնդիր)*
2) Դրանք գալիս են այնտեղ՝ <u>1. հայոց</u> թագավորին և նրա <u>2. մարդկանց</u> ապրանք վաճառելու: *(1–որոշիչ, 2–հանգման խնդիր)*
3) Գարնան արևի առաջին շողերի հետ մոլեգնում է ծովը ու <u>1. կարեվեր</u> խոցված գազանի նման փշրում է <u>2. կապանքները</u>: *(1–ձևի պարագա, 2–ենթակա)*
4) Հիշեց <u>1. ներկայացումներ</u>, որոնց մեջ իբր թատերական նոր <u>2. ձևերի</u> որոնումներ կային: *(1–վերաբերության խնդիր, 2–հատկացուցիչ)*

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկ(եր)ի *ը*-ն ճիշտ տեղադրված:**

1) կ(ը)ն(ը)կատի, համ(ը)ռանալ, չընկ(ը)րկել
2) դ(ը)ռ(ը)նբաց, տ(ը)ռտմել, խ(ը)մբվել
3) փ(ը)ռկ(ը)վել, կ(ը)նճռոտ, խ(ը)ճ(ը)ճվել
4) կ(ը)ռկնել, հանգց(ը)նել, խառ(ը)նվածք

53 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

1) Պատշգամբի սյունաշարերին կախված գույնզգույն լապտերները լուսավորում էին ծաղկանախշ գորգերով զարդարված սրահը:
2) Սենյակի անկյունում մի ավել կար, որ անգործածելի լինելու պատճառով դարձել էր սարդի բույն:
3) Կայծակը չոր ճայթյունով բախվեց ժայռին, թռավ մի կողմ և անհետացավ գետնի մեջ. քուռակը խրտնեց ու վազեց դեպի մայրը:
4) Ձիերը ահ ու սարսափով կանգնում էին կիսաքանդ կամրջի առաջ՝ վախենալով նրա վրայով անցնելուց:

54 **Տրված հատվածներից որո՞ւմ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա:***

1) Լուսաբացի թավշյա փեշով սրբեմ
Ծիրկաթինոտ ճակատն իմ Սալվարդի:
2) Ես լուռ կթաղեմ իմ ցավը միակ,
Զվարթ կժպտամ բախտավորի պես,
Երբեք չեմ բանա սրտիս մութը փակ,
Երբեք չեմ հայտնի իմ տանջանքը քեզ:
3) Մնաս բարյավ, բայց միշտ հիշի՛ր,
Որ քեզ շատ եմ կարոտել,
Եվ տեսության ժամի համար
Չմոռանաս աղոթել:
4) Այս քարանձավներն անկոպ ու անբիբ
Աչքերն են անգիր հավիտենության:

55 **Ո՞ր նախադասության մեջ մեկից ավելի անկանոն բայ *չկա:***

1) Թորիկին հետաքրքրում էր փողոցում ամեն բան. երբ տեսնում էր՝ արջ են խաղացնում, կանգ էր առնում ու երկար դիտում:
2) Թումանյանը դուրս է գալիս տնից ու որտեղ պատահում է որևէ ծանոթի, հրավիրում է իրենց տուն՝ խաշ ուտելու:
3) Ամպերը դարձել գթության քույրեր, Ջրվեժի վրա ջուր են շաղ տալիս:
4) Երբ լսեցի նրա մարտահրավերը, սիրտս թնդաց, թողեցի ծնողներիս, զինավառվեցի և բազեի պես թռա նրա մոտ:

56 **Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա:***

1) Բանաստեղծն արդեն տանջանքից հոգնել, Ուզում է քնել, հավիտյան քնել:
2) Նա ուզում էր սխալ լսած լինել, բայց ես հենց հաստատեցի ասածս:
3) Գուցե Բասուտա գետը, ուրիշ գետի հետ խառնվելով, հասնում է այն ծովին:
4) Պատասխա՛ն տուր ինձ, մատնի՛չ սևաչյա, Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն:

57 **Տեքստի նախադասություններից դուրս բերված հատվածների՝ բաց թողած տեղերում տեղադրելու ո՞ր հերթականությունն է ճիշտ:**

Վաղորդյան մառախուղը …… հետզհետե նոսրանում էր, նրբանում: Այժմ մշուշի միջից, ինչպես թափանցիկ շղարշի միջից, սկսեցին նշմարվել հեռավոր պատկերները: Երևում էր Սիմ լեռան կանաչազարդ շղթան՝ ձյունապատ գագաթներով, իսկ ավելի հեռու՝ դեպի Կրկուռ և Նեմրութ լեռների կողմերը, …… մանուշակագույն ժապավենի նման: Երևում էին նաև Քարքե լեռան բարձրությունները՝ …… և մթին ծմակներով:

Հիշյալ լեռների հսկայական շրջանակի մեջ մի սքանչելի պատկերի նման երևում էր Մուշի ընդարձակ դաշտավայրը՝ հարթ, հավասար եզրագծերով, ……:

Արածանին Մուշի լայնարձակ դաշտավայրը երկու մասի է բաժանում: Նրա արգավանդ ափերի մոտ, բացի բնիկներից, ապրում էր մի ժողովուրդ, որ Գանգեսի ափերից եկել ու ասպնջականություն էր գտել այստեղ, ……:

Արածանիի ափերի մոտ ապրում էր և մի այլ ժողովուրդ, որ հյուրընկալվել էր այստեղ Հոանգոյի ափերից, և դեղնամորթ սինեացին, իրեն ……, մշակում էր հայոց երկիրը: Նրանց բազմաթիվ անասունները արածում էին Արածանիի ափերի մոտ, նրանց գեղեցիկ կանայք ……, որ իրենց գունագեղ գորգերով զարդարեն հայոց իշխանազունների ապարանքները:

1. իբրև մի լայնատարած նախշուն գորգ
2. որդան կարմիր էին հավաքում կանաչ ցողազարդ մարգագետիններից
3. Բզնունյաց ծովակից մի նեղ շերտ էր երևում
4. ամբողջովին հայկական համայնքի մաս զգալով
5. և հնդիկ ժողվրդի արորի խոփը փայլում էր հայոց արեգակից
6. արեգակի՝ հորիզոնի վրա բարձրանալուն զուգընթաց
7. հայտնի իրենց մռայլ անտառներով

1) 6, 1, 2, 3, 4, 5, 7
2) 3, 1, 4, 7, 5, 6, 2
3) 3, 1, 4, 6, 5, 7, 2
4) 6, 3, 7, 1, 5, 4, 2

58 **Ո՞ր նախադասության մեջ է դերբայական դարձվածը (դերբայը իր բոլոր լրացումներով) ճիշտ ընդգծված (նախադասությունները կետադրված չեն):**

1) Արտառոց է ինձ համար երբ դրամատիկական երկը համեմատում են բամբակի իսկ ներկայացումը <u>նրանից ստացված հագուստի հետ:</u>
2) Տղան կանգնում էր ժայռի գլխին պարսատիկը թափով պտտում և քարը <u>զարկված ագռավի պես թպրտալով</u> ընկնում էր ձորը:
3) Չիբուխլուից <u>զարտուղի ճանապարհով փախուստ տալով</u> Կամսարյանը հաստատվեց Թիֆլիսում:
4) Ռաֆֆին ամեն օր հորդորում էր <u>Շիրվանզադեին մի խոշոր գործ գրել ամսագրի համար</u>:

59 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

1) երդվում էին, զբոսնում է, արտագրեց
2) պարզվեց, թերագնահատել, համակրել
3) կառչել, կորել էին, խաղացինք
4) կանգնեց, հիմնավորեցի, մոտեցա

60 **Ո՞րն է տրված նախադասության քերականական և տրամաբանական ճիշտ շարունակությունը:**

Քաղաքը տափարակի վրա է. արևելյան կողմում, ……, տափարակը հանկարծ կտրվում է, կախվում խոր ձորի վրա:

1) որ տաք անձրևից հետո արահետը շողշողում է կրաքարի փայլով
2) ուր մինչև հիմա էլ մնում են անհայտ շենքի ավերակները
3) թեև անդնդում մռայլ խոխոջում է մեր գյուղի գետը
4) ուղղաձիգ ժայռերի լանջով վայր է իջնում սպիտակ արահետը

61 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Մայրաքաղաք գալով՝ մի օր հանդիպեցի ուսուցչիս. որքա՜ն էր փոխվել նա:
2) Առասպելներն ասում են, որ եթե Մեծ սֆինքսի մոտ մեն-մենակ մնաս և նրան հարցեր տաս, ապա կարող ես լսել պատասխանը:
3) Դամբարանների մասին մեզ են հասել արձանագրություններում գրված կցկտուր տեղեկություններ:
4) Այդ մեխը չէր կարող միայն իր ծանրությունից պոկվել. ո՞վ է ձգելով պոկել պարանը:

62 **Տրված տեքստի համարակալված պարբերություններից որո՞ւմ ավելորդ նախադասություն կա:**

1. Հորեղբայրս հողատարածք էր գնել ու նռենիներ էր տնկել, բայց դրանք հակառակի պես չէին աճում: Պատճառը հողն էր: Չոր էր: Ոնց որ անապատ: Հորեղբայրս, ձեռքը իր գնած վեց հարյուր քառասուն հեկտար չոր հողի կողմն անելով, ասել էր. «Էստեղ՝ էս ահավոր անապատում, ծաղկանոց կբացվի: Հողի տակից կբխեն սառն աղբյուրներ, ու մի սքանչելի հեքիաթային գեղեցկություն կսարքենք»:
2. Ես մեր ընտանիքի միակ անդամն էի, որը հողակտորը տեսել էր: Հորեղբայրս գիտեր, որ միայն ես կհասկանայի իրեն: Կհասկանայի, թե ինչ ուժ էր նրան մղում, անտեսելով սնանկացման վտանգը, գնել այդպիսի մի հողատարածք: Եվ ես հասկանում էի:
3. Գիտեի, ու ինքն էլ գիտեր, որ գնածը գրողի ծոցում՝ Սիեռա Նևադայի ստորոտում, մի անպետք անապատ էր՝ ծածկված չոր ու ցամաք հողից դուրս պրծած ամեն տեսակի անպետք բույսերով՝ մեջը վխտացող մարգաշներով, սկյուռներով, քարադոդոշներով, օձերով ու հազար ու մի անապատային արարածներով: Անապատներում տարատեսակ օձեր են լինում, մի մասը՝ թունավոր, տարբեր գույների ու չափերի:
4. Վերը՝ երկնքում, բազեներից, ճուռակներից ու արծիվներից բացի, ուրիշ թռչուններ չկային: Լռության, մենության, ունայնության տարածք էր: Հորեղբորս հետ քայլում էինք պապակ հողի վրայով: Դա բնությունն էր՝ իր ամենից հպարտ, ամենից չոր և ամենից գեղեցիկ պարզությամբ:

1) 4-րդ
2) 2-րդ
3) 1-ին
4) 3-րդ

63 **Հ. Թումանյանը «Հայոց լեռներում» բանաստեղծության տների վերջին երկտողերի միջոցով ի՞նչ հնարք է օգտագործել՝ տվյալ տան ասելիքն ամփոփելու համար:**

1) Յուրաքանչյուր տունն ավարտել է նոր երկտողով:
2) Նույնությամբ կրկնել է երկտողերը յուրաքանչյուր տան վերջում:
3) Երկտողերը կրկնել է դրանց առաջին տողերի փոփոխությամբ:
4) Կրկնել է երկտողերը՝ յուրաքանչյուր երկրորդում փոխելով մեկ բառ:

64 **Ո՞րն է Աբու-Լալա Մահարու խորհրդանշական վերջին հանգրվանը Ա. Իսահակյանի համանուն պոեմում:**

1) ժեռ քարերը
2) անապատը
3) արևը
4) աստղերը

65 **Ո՞ր տարբերակում են բոլոր ընդգծվածները բայական անդամի լրացում:**

1) Ոտքիս տակ մի մեծ սար է սարսռում, Եվ **գլխիս վերև** երկինք է մի մեծ, Տիեզերքն իմ մեջ **իրեն** է փնտրում, Եվ զրնգում է տիեզերքն իմ մեջ:
2) **Կիսարթուն** քամին կտուրից թռչում, **Ցանկապատին** էր հենում կռնակը:
3) Մորս արցունքի **պարզությունն** ունեք, Գոհա՛ր կաթիլներ **գարնան** անձրևի:
4) Հեռվում ուրվագծվում էր կապտաթույր մշուշով **ծածկված** սարը՝ փեշերը պատած խիտ **թփուտներով**:

66 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բուլ պիտի դրվի:**

Առավոտյան երբ աղջամուղջը աստիճանաբար տեղի էր տալիս արևի(1) ծառերի ճյուղերի արանքից թափանցող շողերին բացատներում ձյան(2) սպիտակաթույր սփռոցի վրա լերդացած արյան շիթեր էին երևում ու այստեղ-այնտեղ(3) խառնիճաղանջ հետքեր կոկորդը կրծած գայլի դիակ կոտրատված ճյուղեր: Մինչև շների(4) որսի կենդանու միսն ուտելը(5) Պանիևը նստում էր մի փչակի մոտ անշարժանում(6) կարծես հաճույք ստանալով շների ուտելուց:

Պանիևի սարսափը հեռուներում էր տարածված նրա մասին պատմություններ էին անում սարսռում(7) նրան տեսնելիս: Ասում էին նախկին սպա է մարդ է սպանել բանտ է նստել հետո(8) գնացել անտառ: Ըստ լուրերի(9) հյուսիսի անտառներից մեկում նա իր կնոջն էր սպանել պարզապես հրամայել էր շներին(10) զզզեն նրան:

1) 1, 2, 3, 5, 6, 8, 10
2) 1, 3, 4, 6, 9, 10
3) 1, 2, 4, 5, 7, 9, 10
4) 2, 3, 5, 6, 7, 8, 9

67 **Համարակալվածներից որո՞նք են սահմանական եղանակի բայաձևեր:**

Գուցե դրանով 1. կարողանամ ազդել թագավորի քարացած սրտի վրա: Ահա այդ նպատակով, ինչպես դու 2. գիտես, գնացի Գարդման՝ 3. վերցնելու զորքս, որի թիվը ութ հազարի 4. էր հասնում, և առանց 5. երկմտելու՝ անհապաղ 6. դիմեցի ուղղակի Ձորափոր: Առաջին գործս 7. եղավ Կայլյան բերդը 8. պաշարել ու առնելը:

68 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Լեոնարդո դա Վինչիի «Մոնա Լիզան» կամ մեկ այլ անվանումով «Ջոկոնդան» բոլոր ժամանակների ամենահայտնի դիմանկարն է: Ասում են, որ Լեոնարդոն յուրահատուկ կապվածություն է ունեցել այդ նկարի հետ. դրա ստեղծման ողջ ընթացքում երբեք չի ընդհատել աշխատանքը, ինչը արել է շատ այլ գործերի դեպքում, աշխատել է առանձնակի սիրով ու եռանդուն, Ֆլորենցիայից հեռանալիս էլ հետը տարել է Ֆրանսիա:

Նկարի աղմկալի համբավը, սակայն, պայմանավորված է ոչ միայն նրա գեղարվեստական բարձր արժանիքներով: Նկարը դեռ երկար ժամանակ կշարունակեր հայտնի մնալ միայն արվեստի նուրբ գիտակների նեղ շրջանակին, եթե չլիներ մի իրադարձություն, որն ապահովեց նրա համար բացառիկ հանրահայտություն: 1911 թ. այն գողացվեց Լուվրի թանգարանից, ինչից հետո մինչև նրա հայտնաբերումը հետաքննության ընթացքի մասին լուրերը՝ նկարի արտապատկերի հետ միասին տևական ժամանակ չէին իջնում թերթերի էջերից՝ այդպիսով դիմանկարը հայտնի դարձնելով ողջ մարդկությանը:

Նկարի համաշխարհային հռչակը աշխուժացրեց ոչ միայն արվեստագետների հետաքրքրությունը դրա հանդեպ: Բացվեց զանազան կարգի ուսումնասիրությունների շղթան: Հետազոտողներն սկսեցին ուսումնասիրել նաև բուն գեղանկարչության հետ չառնչվող որոշ հանգամանքներ:

Օրինակ, հետազոտողների մի խումբ նպատակ դրեց որոշելու նկարի ստեղծման տարեթիվը: Ուսումնասիրելով նկարում պատկերված կնոջ (նա կինն է ֆլորենցիացի պետական ազդեցիկ գործիչ Ֆրանչեսկո դել Ջոկոնդայի, որն էլ պատվիրել է նկարը, և ում ազգանունն էլ հիմք է հանդիսացել նկարի երկրորդ անվանման համար)՝ Լիզայի ուսերին գցած թափանցիկ ծածկոցը, նրանք պարզեցին, որ նման ծածկոց կրել են նոր ծննդաբերած կանայք, և համադրելով տվյալները՝ եզրակացրին, որ նկարը ստեղծվել է 1503-ին, երբ ծնվել է Լիզայի որդին:

Կամ՝ գեղեցկուհու ձեռքերի և դեմքի չափումների միջոցով որոշեցին վերջինիս հասակը՝ 168 սմ: Հաջորդ քայլը եղավ նրա գանգի մոդելի կառուցումը: Ապա փորձեցին վերստեղծել կնոջ ձայնը: Շատ ավելի երկար տևեցին նրա առեղծվածային ժպիտի՝ նկարի ամենաբնորոշ կողմի շուրջ վիճող ճապոնացի գիտնականների աշխատանքները, որոնք հետաքրքիր արդյունքների հանգեցրին: Այսպես, Լեոնարդոյի պատկերած կինը, ըստ գիտնականների, 83%-ով երջանիկ է, 6%-ով՝ վախեցած, 2%-ով՝ չարացած:

1. Հանելուկային ժպիտի ուսումնասիրությունը բերեց այն եզրահանգման, որ կինը հիմնականում դրական տրամադրության մեջ է:
2. Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեցին կնոջ մի շարք ֆիզիկական հատկանիշները:
3. Որևէ գործ նկարելիս Լեոնարդո դա Վինչին երբեք չի ընդհատել կամ հետաձգել աշխատանքը՝ ավելի ուշ շարունակելու համար:
4. Նկարի անվանումներից մեկը կապված է նրա պատվիրատուի հետ:
5. Նկարի հանդեպ հետաքրքրության աննախադեպ աճը ինչ-որ չափով պայմանավորված է գեղագիտական արժանիքների հետ չկապված կողմնակի հանգամանքներով:
6. Մոնա Լիզայի որդու ծննդյան թվի համընկնումը նկարի ստեղծման տարեթվի հետ ապացուցեց նկարում պատկերված կնոջ ինքնությունը:

69 **Ո՞ր հատվածներում հանգման անուղղակի խնդիր կա:**

1. Ինչպես ծերունին ձայնով պառաված
   Ձայնակցում է ժիր թոռնիկի երգին,
   Այնպես էլ ծերուկ անտառը կամաց՝
   Արձագանք տալիս ջրի աղմուկին:
2. Ասավ, սեղմեց սովալլուկ
   Ձավակներին իր լանջին,
   Ու շրթունքի վրա դալուկ
   Սառավ համբույրը վերջին:
3. Է՜հ, ի՞նչ արած, բախտը խռով
   Թող աշխարհում մեզ չհիշի,
   Միայն ապրենք մենք՝ սիրելով
   Թեկուզ ես քեզ, դու՝ ուրիշի:
4. Ու քարշ եմ գալիս ու քարշ եմ գալիս,
   Անքուն ջրի պես դիպչում քարերին,
   Անշունչ քարին էլ երնեկ եմ տալիս:
5. Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին,
   Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Ե*** խոնարհման բոլոր բայերի անորոշը և վաղակատարը ձևով նույնն են:
2. Բոլոր կանոնավոր բայերի ապակատարը և անորոշ դերբայի սեռականը ձևով նույնն են:
3. Բայի ուղիղ ձևը անորոշ դերբայն է:
4. ***Ն*** և ***չ*** սոսկածանցավոր կանոնավոր բայերի ենթակայական դերբայներում սոսկածանցները չեն պահպանվում:
5. Հարակատար դերբայը փոխանվանաբար գործածվելիս կարող է հոլովվել և հոդ ստանալ:
6. Բոլոր համակատար դերբայները ունեն ***իս*** վերջավորություն: